

# ԲԱԶՄԱՎԵՊ ՀԱՆԴԻՍԱՌԱՆ

— ԲԱՆԱՄԻՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲՈՐՅԱԿԱՆ —

ԹՅՀ-ՊՅՀ

ՀԱՅՈՐ

ՏԱ.



Ա. ՀԱՅԱՐ

1924

ԴՈՑԵՄԲԵՐ

ԹԻՒ 11

## ԲԱՆԱՄԻՐԱԿԱՆ

## ՄԱՍԵՆԱԳՐԱԿԱՆ ՀԱՍԿԱՓԱՂ

«»

ՅՈՎՃԱՆ ՄԱՆԴԱՊԻՆԱԽՈՅ ԱԽԱՋԻՆ ՉՈՐՄ ՃԱՄԵՐՈՒ ՆԱԽԱԴՐՈՒԹԵԱՑ ՏՐՈՀՈՒՄՆ  
ԵՒ ՊԱԽԱՍՆԵՐՈՒ ԼՐԱՑՈՒՄՆ ՄԵՐ ԿՈՂՄԻՆ

ՄԵՐ բազմերախտ Հարբ յողնաջան աշխատութեամբ, Հայրապետիս վերագրուած ճառերը տպազլութեամբ ի լոյս ածելով, շատ համարած են միայն մի քանի ակնյայտնի սխալները կամ ճեռապիրներէ հազիր սակաւ տարբերութիւնները ի ստորև էջերուն նշանակելի, յանձնելով յետագայից շարունակելու իրենց պանծալիք գործը և մնացած սիալներու պրապոււմն, թերիների լրացումն և ուղղագրութիւններն:

Այսպիսի ուսումնասիրութեան մը առիթն կ'ընձեռէ Մանդակունւոյ ճառերու երկաթագիր օրինակին նախազրութեանց առաջին էմն, սկսած՝ «Ամենայն վիրաւորք մարմուկ» էն մինչեւ տպազլութեան էջին վերջի բառերն. «Զանմահ կենացն վայել չութիւնս» :

Դիտելով որ Եւ ձառէն սկսած, իւրաքանչիւրն մինչեւ իջ, ունին Այրութեա-

կան կարգով նշանակուած իրենց նախադրութիւններն, հարկաւ բնականօրէն ընթերցողն ինքն իրեն հարց կու տայ. Հապա առաջին չորս ճառերն ինչո՞ւ առանց նախազրութեան են: Այս հարցումն առաջնորդեց զմեզ ուշի ուշով կարդալու տպագրի, նոյն և ձեռազրի առաջին երեսի վրայի միաձոյլ զանգուածն. և անոնց բովանդակութիւնն համեմատելով ցանկի առաջին չորս ճառերու զվիակարգութեանց հետ, զիւրին եղաւ նշմարել որ ընդօրինակողի անուշազրութեան արդիւնց են նախազրութիւնները առաջինէն սկսած չըստուհի մինչեւ չորրորդը. յատ այսորիկ ուղիղ կը շարունակէ մինչեւ վերջ:

Ապա երկաթագիր մատենիս ընդօրինակողն (կամ մի այլ ոք) զայս կը յաւելու յինքնէ. «Եւ արդ զայդ ամենայն փոքր ի շատէ ծաղկաբաղ արարաց»: Արդարէ

շատ փոքր է այս ծաղկաբազը, և գրիչն ինցն ալ կը խոստվանի ասելով. «Բայց են և այլ տերիք հոյլը խորհրդոց, և բազում օրինակը չարեաց և առաջինութեանց» գորս ինչն չէ ամփոփած, այլ «եղեալ են ի սմա» ընդարձակ ճառին մէջ՝ խօսուած ժողովուրդի ականջին:

Համառուս նախադրութեանց բովանդակութիւնն կը փորձենք սրոհել ըստ կարգի ցանկի գլխակարգութեանց՝ որոց առաջինն է.

### 1. Վասն խոստովանութեան վարուց յանց ցանկացած.

Ա. Ամենայն վիրաւորք մարմուկ առ մարմասոր թիշկան ցուցանեն<sup>1</sup> զի՞րս ցաւցուն չարուրեան և հնարագէտք արուեստին ըստ ցաւցածին և ըստ վիրին չարութեանն զեղ յօրինեն այնմ անդամոյ ուր զի՞րն կայցէ. և ոչ եթէ վէր յականն և զեղ յունկանն որ առնիցէ Նոյնպէս և յորժամ մեղաց հիւանդութիւն որ ունիցի, և առ թիշկին որ հոգուց մերձենայցէ, զոր ինչ վէրս մեղաց ցուցանիցէ վիրաւորն, մարր<sup>2</sup> է թիշկին զի՞րին<sup>3</sup> չարութիւնն ծանուցանել և վասն նորին իրատել և յանդիմանել և միսիթարութեամբ՝ կատարել զիրատ բանի վարդապետութեանն. զի թանձրագումից լսելիք դիւրալուր բանիցն հանդիպել կարացեն, և զարուրին վիրին ծանուցանել, և զդեղոցն հանգամանն:

### 2. Վասն ապաշխարութեան

Բ. Առյն և բանից թղթոյս շարագրութիւնն ոչ խառն ի խուռն զամենայն անօ-

րէնութիւն առաջի արկեալ ցուցանեն, և կամ զայլ և այլ յանցանաց ինչ պատմեն, այլ ըստ խնդրոյ խնդրողին զնորին անօրէնութիւն չարութեանն ծանուցանեն, զի լսելիքն օգտել կարացեն, ոչ պերձ ինչ բանից կամ իմացուածոց փոյթ արարին, այլ զի դիւրալուր ցուցանիցեն ինչ պատմել, որ ի բանիցն դիւրաւ և բաջ ի միտ տան առնուլ, զի ոչ եթէ ճարտասանութեան<sup>4</sup> բանից ի ինդիր է վիրաւորն, այլ որ զիւրալուր բանիւ գնանգամանս առողջացուցիչս զեղոցն օգուտ<sup>5</sup> վիրացն ցուցանիցէ, և զախտու մեղացն փարատիցէ ասուուածային վարդապետութեամբն, ոչ ինչ աւելի ձևացուցանել բան որ ի Հոգոյն Սրբոյ են հրամանք,

### 3. Վասն պահոցն պնդութեան.

Գ. Զի թէպէտն զի՞րք բազումք զրեցան, սակայն մի և նոյն են պատզամբն։ Այսպիսի ինչ է զոր ասէնն՝ Բնկալաւ Մովսէս տաննպատզամեան օրէնս ի Հոգուն, որ ունէր զամենայն կամս Աստուծոյ. Նմին վկայեն՝ մարգարէքն, և զնոյն դիւրապատում արարին. Նովին Հոգուովն՝ զնոյն և առաքեալքն գրեցին, և եւս առաւել յայտնագոյնն ծանուցին. Նովին Հոգուով զնոյն մարդապիտքն բարգմանեցին<sup>6</sup>. և մի ըստ միոյէն զիւրալուր եւս արարին ի լրումն պատզամացն կամ բանի վարդապետութեանն:

### 4. Վասն ընդունելի եւ անընդունելի աղօթից.

Դ.<sup>7</sup> Ձերմեռանդն արտասուօց պարտէ կալ առաջի Աստուծոյ. և որպիսի՝ ա-

1. Ընդգծուածներն մեր ուղղագրութիւններն են և թիւներու լրացումն, որ ապահովեան մէջ բաց թողուած են կտերու շարքով.

2. Յօր. Այս է.

3. Յօր. Զնոյն։

4. Յօր. Միսիթարութիւն։

5. Յօր. Ճարտարապանութեան։

6. Յօր. Գիրոյն։

7. Յօր. Ասէն։

8. Յօր. Ակայ և.

9. Ա. Կորիթ. Ժթ. 10. — Ժթ. 26.

10. Տպաղողը ի ստորև նշանակել են «Թուղթ մի անկեալ է յօրինակին»։ Բայց ոչ թուղթ հաւասարական քանզի զիւրալուր արարին ի կատարումն կամ ի լրումն» իմաստը կ'ամբողջացէ. այսինքն Արարապետ Եկեղեցւոյ, ըբէնց մէկնաբանութիւններով յաջորդաբար Աստուծոյ պատզամերը հասկանալի ըրին ժողովրդական և զործացութիւնը զիւրացուցին։

զօթք են անընդունելի և զինչ պատիժ<sup>1</sup> նորա, և կամ ո՞ր ընդունելիք և որպիսի՞ վարձք նորա. և եթէ որպիսի՞ մեղաքը ջանայ սատանայ խափանել զաղօթս աղօթականին. բագուցան և զդասն դատաստան՝ ծուլացելոցն և մեղացելոցն՝ զանմահ կենացն վայելչութիւնս։

Այս նախազգութիւններն վանքիս նոտրագիր օրինակին մէջ չկան և հաւանական է որ քաղուած է այլ և այլ ճառընտիրներէ, մանաւանդ ի դ. ին յորում բազմազոյն գտանի. թեթև համեմատութիւնն իսկ յայտնի ըրաւ որ կախումն չունի Երկաթագրին հետ, և պէտք է ասել որ բազմիցն զիւրահասկանալի է՝ և ամփոփ քան զտպազգութեան Նախօրինակն, ուրու վրայէն մի քանի ուղազգութիւններ կատարած էինք և տալու էինք ուղազգութեան. բայց կամենով համեմատաել նօտրագրի հետ, ի մեծ ուրախութիւն սրտիս, զտայ որ նոյն էին մեր ուղազգութեաններու հետ, զորոնց իրը հարցափրուրին կ'առաջարկեմ յշնթերցում։

Տպ. էջ 115 ա. 21. «Այլ երգմամբ հաստատեմց զիւրահան, զի առանց երգման ոչ հաւատայ»։

Մենք ուղղած էինք զիւնա.

Զեսպիրէ ունի. «Այլ ասեն ոմանց եթէ վասն այնորիկ երգնումը՝ զի Բանց մեր հաստատուն լիցին»։ (Էջ. 27).:

Տպգր. էջ 101 ա. 18. «Եւ եթէ բան ինչ բարի զնախանձորդէն լսիցէ, տրտմի և տիրին երեսք նորա. . . Սիրելի է թըշնամեաց նորա, և թշնամի բարեկամաց նորա. Ատէ զորդիս նորա, և չարախիսէ զնմանեաց նորա. և ոչ միայն զիսօսւնն, այլ և զանասոնն նորա ատի»։

Մենք ուղղած էինք «Քինուանիս նորա»։

Զեսպիրէ ունի. «Ատէ զորդիս նորա և չարախոսէ զինուանիս նորա»։ (Էջ. 159).:

Քինախնդիրն և ոխական, եթէ անմեղ արարածները այն հօր որդիքը կ'ատէ, որչափ ևս առաւել զիինն, զամուխինն և բոլոր ընտանիքն և արեան մերձաւորները. մանաւանդ բամբասանըի և զրպարտութեանց նշաւակ եղողն՝ կինն է, ընտանին է առաւելապէս, և որոց մարդիկ զիւրաւ հաւատար կ'ընծայեն։

Տպգր. էջ 100 ա. 28. «Ցորժամ ոխս ընդ ընկերին պահիցէ, և զչարիսն ի սրտին թաղեալ ունիցիք. նսոի հանապազ և իորհի պատահարս չարեաց և դիպումն փորձութեանց նախանձորդին ըղձանայ, շրջի մըտափորհ յուս մարեալ, և երկնէ իրըն զծննդական»։

Զեսպիրէ. Ցորժամ զոխ չարութեանն ի ներց պահեացէ . . . նսոի խորհի հանապազ զպատահարս չարեաց իրաց<sup>2</sup>. և դիպումն փորձութեանց նախանձորդին իւրոց ըղձանայ։ Շրջի տիսուր յարմարեալ զինքն, և երերայ իրըն զծննդական»։

Մենք ուղղած էինք. գումարեալ։

Ոխակալ և զինախնդիր մարդը միշտ ինքնիր մէջ կը կոռփ, կը գուպարի, կը մտածէ որոպայթ լարելու և վնասելու միջոցները. սատանան ի ծածուկ զինքը կը զրգէ, ինչն իսկ ցինու և նախանձով լցուած մարդու դէմ . . . «Կանայց ի բարս բոզից կերպարանեալը . . . յորմէ շարաւ նեխութեան և հոտ զազրալի ելանէ, որ զանձին երկիւղածացն զզուեցուցանէ և զիւացն է ցանկալի. զի ի մէջ այնպիսի խայտառակելոցն սատանայ զումարեալ շրջի ի վերայ» . . . զիրիսոսն ի բաց մերկացեալը, և զաստանայ յանձին զգնեալը — ամենայն չարութեամբ հանդիր։

ԲԺՇԱԿԱԿԱՆ ՀԱԱԱՏՔԸ. (Էջ 190 ա. 10): Մանդակունին զիւթերուխարէութեանց դէմ բարողելով, որոց հաւատար կ'ընծայէ խաժամուռ ամրոխն, կը զգուշացնէ իւր ուն-

1. Յօր. Վարդեց։

2. Յօր. Գաստառու։

3. Զեսպիրէ օր. Աստի։

4. Յօր. Խորոց։

կընդիրները չհաւատալ անոնց սնոտի առածներուն, իրը թէ գերբնական մարդիկ են, ինչպէս Արմոն մողն, «որ մողէր և ապշեցուցանէր զազն վամարացոց, ասել զանձնէ թէ իցէ մեծ ոմն»։ վասն զի «յիւ մար մարդիկ ի չպատահելն չհային, բայց եթէ զմինն պատահել տեսանիցն՝ զայն առաւել վերացուցանեն, և ի լսելիս ամենեցուն արկաննեն»։ Այսու հանդերձ սուրբ Հայրապետ, զիջանելով բնութեան բնական երեսոյթներուն՝ կը շնորհէ թէ մարդու երբեմն դիմերու ներգործութեամբ կրնայ փափարին հասնիլ կամ ցաւերուն բժշշկութիւն գտնել։ Բայց այդ պատահամեն ոչ դիմէն է և ոչ սատանայէն, այլ մարդուս ենթակայական (subjunctif) ներգործութիւնով՝ ձիշը այնպէս, ինչպէս տասն է իններորդ զարուն Յ. Մ. Շարկօֆի զբարցն կը սովորեցնէր իրը նոր բան մը՝ հրապուրիչ կոչումներով։ բժշկական հաւատք, ներշնչութիւն, կամ բնաշնչուրին (auto-suggestion), ուզելով նուաստացրնել ՀՐԱԾՔի արդիւնքն և աստուածաբանական հաւատքի ոյժն՝ բնութեան Արարշի հեղինակութիւնն և զօրութիւնն ։ Խակ Մանդակունին կը սովորեցնէ. «Այլ դիմէ և ուսթոյ զօրութիւն ոչ լինի, և եթէ եղեալ տեսանեն ի յանկարծ, որպէս ասացին, ոչ եթէ յուութէն և ի դիմէն եղե, բայց զի դու այնպէս հաւատացեր, թոյլ ետ կատուած այնպէս լինել՝ ըստ բում այնպէս հաւատարյուն»։

Ուրեմն մարդ կարող է բնութեան գաղտնի ազգեցութեամբ արամազդուիլ բժշկութեան բնական ճանապարհով, և դորան չենց կարող հրաշք կամ հրաշագործութիւն կոչել. այլ զայն կը կոչենք հաւատքը որ ի վեր է բնութեան օրէնքներէն, և զոր զիտութիւնն, այսօք և վաղը, բնական օրէնքներով բացատրելու անկարող, պիտի խոստովանի Եղիպատոսի կախարդներու պէս, ասելով. «Աստուծոյ մատը կայ այս բանի մէջ»։

Ն. Գ. ԴԱՎԻԴՍԵԱՆ

\*\*\*

## ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ԶԵՐԱԳԻՒՐՔ Ս. ՂԱԶԱՐՈՒ ՎԱՆՉԻՆ

(Ժար. տես բազմավէպ, 1924 էջ 385)

Ի.Թ.

### ՄԱՐԴԱԿԱԼՑՄՈՒԹԻՒՆ, ԱՊՈՒՍԱՑԻԳԻ

Օրինակ մը եւս ահա, թերեւս արդէն զիտածներուն ալ ընտրելազոյնը, որ տօմարական և աստղաբաշխական ու աշխարհազրական խառն զրուածներու հետ զրուած է, ձեռազիր միջակ հատորի մը մէջ։

Կաշեպատ փայտեայ պահպանակներով լաւ կազմուած է. ունի 19 հարիւրորդամեղը մեծութիւն, 14.5 հարիւրորդամեղը լայնութիւն և 3 հարիւրորդամեղը թանձրութիւն և կը կրէ ձեռազրատան 968 թիւը. Ակիզըն ու վերջը կայ մազաղաթեայ մէկ մէկ թէրթ, որոնց հին երկարագիր խոշոր գրերով կը ներկայացնեն Աւետարանէ կտորներ։

Ամրող զործ կը բաղկանայ 292 էջերէ և 146 թէրթէ. թուղթը բամբակեայ է և գիրը բոլոր, և այնչափ մարուք՝ որ տպագրուածի պատրանըը կու տայ։

Ընդորինակութիւնը կատարուած է Արշին Վեօրանեացի անուն անձին ձեռքով, իւով բաղացին մէջ Ռազ (1066 - 551 = 1617) թուին. թէեւ տեղ մ'ալ՝ կը յիշուի ՍԱՅԻՌՈՒ ԲԱԲԵՐԹՅԻ գրիչ մը, բայց ամրող զութիւնը առաջինին գործն է։

\*

Մարդակազմութիւնը, զոր միայն ուշադրութեան առարկայ կ'առնեմ, կը զրաւէ 147-170 էջերը, կը կրէ՝ Ապուսայիղի անունը, և ինչպէս արդէն ըսի, գտնուած օրինակներուն ալ լաւագոյնն է, և ամենէն կարևորը, որովհետև կը պարունակէ Ասար Սերաստացիին անունը, և զմեզ աւելի կը մօտեցնէ այս բժիշկին, որ զիտենց թէ Ապուսայիղի Մարդակազմութեան կարգաւորիչ խմբազրիչն եղած է։